ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների և նորմատիվների հաշվարկում/վերանայում, ինչպես նաև ԱՀԱ ներդրմամբ պայմանավորված ապահովագրական վճարի հաշվարկման, վճարման, հաշվատվությունների նարկայացման մեխանիզմի մշակում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության Հիմնադրամի ձևավորման հետ կապված օրենսդրական և ենթաօրենսդրական փաթեթի մշակում, հարակից փաստաթղթերի մշակման ընթացքում համապատասխան ծախսերի հաշվարկում, այդ թվում

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում ապահովագրական վճարի սահմանման, ապահովագրական վճարի հաշվարկման, գանձման, ապահովագրական վճարի վճարման և դրա վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման մեխանիզմների օրենսդրական ձևակերպումների ներկայացում:
2. ԱՀԱ Հիմնադրամի բյուջե ապահովագրավճարների վճարման սխեմայի նկարագրություն՝ ներառելով պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող գործառույթները, հաշվառման և հաշվետվական ձևերը, դրանք տեղեկատվական համակարգերում արտացոլելը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր

աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ անհրաժեշտության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրում նախատեսված գործառույթների իրականացման վերաբերյալ:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության բնագավառում:
- Ավելի քան 10 տարվա փորձառություն հարկային օրենսդրության բնագավառում,
- Առնվազն 10 տարվա փորձ կազմակերպություններում ֆինանսական կառավարման, ֆինանսական հսկողության, աուդիտի, հաշվապահական հաշվառման ոլորտում
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բժշկական կազմակերպության գործունեության թեմատիկ և պարբերական վերլուծության բնագավառում,
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքի, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: